

Փոխարժեք և առևտրային հաշվեկշիռ

Հայկական դրամի արժեվորումը ընդունված է համարել հայկական ապրանքների արտահանման աճը արգելակող հիմնական գործոն: Այս տեսակետի հիմքում ընկած է այն հանրահայտ փաստը, որ արժույթի արժեվորումը թանկացնում է արտահանումը, էժանացնում է ներմուծումը և, հետևաբար, ընդլայնում է առևտրային հաշվեկշռի պակասորդը:

Ստորև ներկայացվում են երկու մոդելներ, որոնց նպատակն է պարզել փոխարժեքի փոփոխման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա: Նշենք, որ առևտրային հաշվեկշիռը ներառում է ընթացիկ հաշվի ապրանքներ և ծառայություններ հաշիվները:

■ Առաձգականություն

Առաձգականության մոդելի հեղինակներն են Ալֆրեդ Մարշալը և Աբբա Լեբները: Այն հնարավորություն է տալիս առավել հստակ սահմանել այն պայմանները, որոնց դեպքում փոխարժեքի փոփոխությունը ներգործում է առևտրային հաշվեկշռի վրա:

Ընդհանուր դեպքում առևտրային հաշվեկշռի վրա փոխարժեքի փոփոխման ազդեցությունը կախված է արտահանվող և ներմուծվող ապրանքների առաջարկի և պահանջարկի գնային առաձգականություններից: Ներկայացվող մոդելում, սակայն, շեշտը դրվում է պահանջարկի առաձգականությունների վրա: Այդ նպատակով ենթադրվում է, թե արտահանվող ու ներմուծվող ապրանքների առաջարկները բացարձակ առաձգական են և, հետևաբար, ներմուծվող ու արտահանվող ապրանքների պահանջարկների փոփոխությունը ապրանքների գների վրա չի ազդում: Այս ենթադրությունը, ըստ էության, նշանակում է, որ ներքին և արտաքին գները հաստատուն են, և, արդյունքում, ապրանքների հարաբերական գների փոփոխությունը կարող է պայմանավորվել միայն անվանական փոխարժեքի փոփոխությամբ:

Առևտրային հաշվեկշիռը՝ արտահայտված ազգային արժույթով, կարելի է ներկայացնել հետևյալ հավասարմամբ.

$$TB = PX - SP^*M$$

որտեղ TB -ն առևտրային հաշվեկշիռն է, P -ն ու P^* -ը՝ համապատասխանաբար ներքին ու արտաքին գները, X -ը և M -ը՝ համապատասխանաբար արտահանման ու ներմուծման քանակները, իսկ S -ը՝ փոխարժեքը՝ հաշվարկված օտարերկրյա արժույթի մեկ միավորի հաշվով ազգային արժույթի միավորներով:

Քանի որ ներքին և արտաքին գները մոդելավորվում են հաստատուն, ապա առևտրային հաշվեկշռի հավասարումը դառնում է

$$TB = X - SM$$

Վերջինս դիֆերենցելու դեպքում կստանանք

$$dT B = dX - S dM - M dS$$

Իսկ քանի որ մեզ հետաքրքրում է փոխարժեքի փոփոխման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա, այսինքն՝ dTB/dS , ապա ստացված հավասարումը բաժանենք dS -ի

$$\frac{dT B}{dS} = \frac{dX}{dS} - \frac{S dM}{dS} - M$$

Սահմանենք, որ արտահանման պահանջարկի գնային առաձգականությունը արտահայտում է արտահանման նկատմամբ արտասահմանյան պահանջարկի տոկոսային փոփոխությունը գնի, այն է՝ փոխարժեքի տոկոսային փոփոխության դեպքում.

$$\epsilon_X = \frac{dX/X}{dS/S} \quad \Rightarrow \quad dX = \epsilon_X \frac{dS}{S} X$$

Համանմանորեն՝ ներմուծման պահանջարկի գնային առաձգականությունն արտահայտում է ներմուծման նկատմամբ հայրենական պահանջարկի տոկոսային փոփոխությունը գնի, այն է՝ փոխարժեքի տոկոսային փոփոխության դեպքում.

$$\epsilon_M = -\frac{dM/M}{dS/S} \quad \Rightarrow \quad dM = -\epsilon_M \frac{dS}{S} M$$

dX -ի և dM -ի արժեքները՝ առևտրային հաշվեկշռի վրա փոխարժեքի փոփոխման ազդեցությունը արտահայտող հավասարման մեջ տեղադրելով կստանանք, որ

$$\frac{dT B}{dS} = \epsilon_X \frac{X}{S} + \epsilon_M M - M \quad \Rightarrow \quad \frac{dT B}{dS} = M \left(\epsilon_X \frac{X}{MS} + \epsilon_M - 1 \right)$$

Քանի որ առևտուրը սկզբնապես հավասարակշռված է, ապա $X = SM$ և, հետևաբար

$$\frac{dT B}{dS} = M(\epsilon_X + \epsilon_M - 1)$$

Այսպիսով, երբ առևտուրը սկզբնապես հավասարակշռված է, ապա արժույթի արժեզրկման դեպքում առևտրային հաշվեկշիռը դառնում է ավելցուկային, այսինքն՝ $\frac{dT B}{dS} > 0$, երբ արտահանման նկատմամբ արտասահմանյան պահանջարկի առաձգականության և ներմուծման նկատմամբ հայրենական պահանջարկի առաձգականության գումարը մեծ է մեկից՝ $\epsilon_X + \epsilon_M > 1$: Վերջինս ընդունված է համարել *Մարշալ-Լերնեյր պայման*: Իսկ այն

դեպքում, երբ նշյալ երկու առաձգականությունների գումարը փոքր է մեկից, ապա արժույթի արժեզրկման դեպքում առևտրային հաշվեկշիռը դառնում է պակասորդային:


Համապատասխանորեն՝ արժույթի արժեվորումը պակասորդային է դարձնում առևտրային հաշվեկշիռը, այսինքն՝ $\frac{dT B}{d S} > 0$, երբ $\epsilon_X + \epsilon_M > 1$ և, հակառակը, արժույթի արժեվորումը ավելցուկային է դարձնում առևտրային հաշվեկշիռը, երբ $\epsilon_X + \epsilon_M < 1$:

Պարզաբանենք թվային օրինակով: Ենթադրենք՝ դրամ/դոլար փոխարժեքը 300 է, իսկ դրամի արժեզրկումից հետո՝ 250, այսինքն՝ արժեվորման դրույքը կազմել է 16.7%: Հայաստանից արտահանվող միավոր ապրանքի գինը ենթադրենք 600 դրամ է, իսկ ներմուծվող միավոր ապրանքի գինը՝ 4 դոլար: Աղյուսակ 18-ում ներկայացված առաջին տարբերակում առևտրային հաշվեկշիռը դրամի արժեվորումից հետո դառնում է պակասորդային, իսկ երկրորդում՝ ավելցուկային:

Աղյուսակ 18. Դրամի արժեվորման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա				
<i>Նախքան արժեվորումը առևտրային հաշվեկշիռը հավասարակշռված է</i>				
	Քանակ (հատ)	Գին	Արժեք (դրամով)	Արժեք (դոլարով)
ՀՀ արտահանում	50	600 դրամ	30,000	100
ՀՀ ներմուծում	25	4 դոլար	30,000	100
Հաշվեկշիռ			0	0
<i>Արժեվորումից հետո առևտրային հաշվեկշիռը դառնում է պակասորդային</i>				
ՀՀ արտահանում	45	600 դրամ	27,000	108
ՀՀ ներմուծում	35	4 դոլար	35,000	140
Հաշվեկշիռ			-8,000	-32
$\epsilon_X = \frac{0.1}{0.167} = 0.6, \epsilon_M = -\frac{-0.4}{0.167} = 2.4, \epsilon_X + \epsilon_M = 3 > 1$				
<i>Արժեվորումից հետո առևտրային հաշվեկշիռը դառնում է ավելցուկային</i>				
ՀՀ արտահանում	48	600 դրամ	28,800	115.2
ՀՀ ներմուծում	27	4 դոլար	27,000	108
Հաշվեկշիռ			1,800	7.2
$\epsilon_X = \frac{0.04}{0.167} = 0.24, \epsilon_M = -\frac{-0.08}{0.167} = 0.48, \epsilon_X + \epsilon_M = 0.72 < 1$				

Հետևաբար՝ արժույթի արժեվորման դեպքում դրսևորվում են երկու հակադիր էֆեկտներ. գնի էֆեկտ, որը նվազեցնում է հաշվեկշռի պակասորդը և ծավալի էֆեկտ, որը ընդլայնում է այդ պակասորդը: Գնի էֆեկտը կայանում է նրանում, որ արժեվորման արդյունքում արտահանումը թանկանում է, ներմուծումը՝ էժանանում, ինչը դրական է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա: Իսկ ծավալի էֆեկտը կայանում է նրանում, որ արտահանման թանկացումը նվազեցնում է արտահանումը, իսկ ներմուծման էժանացումը՝ ընդլայնում է այն, ինչը բացասական է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա:

Գրաֆիկ 83: J կորի էֆեկտը



Մարշալ-Լերներ պայմանի առնչությամբ կատարված էմպիրիկ հետազոտությունները որպես կանոն նպատակ են ունեցել պարզել, թե արդյոք արժույթի արժեզրկումը բարելավում է առևտրային հաշվեկշիռը: Այդ առումով կոնսենսուսային եզրահանգումը նրանում է, որ Մարշալ-Լերներ պայմանը գործում է արժեզրկումից շուրջ երկու-երեք տարի անց: Պատճառը նրանում է, որ սկզբնապես գերակշռում է գնի էֆեկտը, որի հետևանքով առևտրային հաշվեկշռի պակասորդը էլ ավելի է մեծանում: Եվ միայն երկու-երեք տարի անց ծավալի էֆեկտը դառնում է գերակշռող, որը և դրական է դարձնում առևտրային հաշվեկշիռը: Որի հետևանքով էլ առևտրային հաշվեկշռի հետագիծը նմանվում է լատիներեն J տառին (Գրաֆիկ 83):

Ծավալի էֆեկտի դանդաղ գործողությունը բացատրվում է նրանով, որ հարաբերական գների փոփոխության ու դրանց՝ սպառման և արտադրության որոշումների համապատասխանեցման միջև առկա է ժամանակային լագ: Այսինքն՝ երբ ներմուծման գները թանկանում են, ապա ժամանակ է պետք, մինչև սպառողները անցնեն տեղական ապրանքների սպառմանը, իսկ արտադրողները՝ տեղական հումքի օգտագործմանը:

■ Կլանում

1952թ-ին Սիդնի Ալեքսանդրի կողմից հրապարակված հոդվածում փոխարժեքի փոփոխման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա դիտարկվեց մակրոտնտեսական կախվածությունների համատեքստում: Ալեքսանդրի գաղափարը կայանում էր նրանում, որ փոխարժեքի փոփոխության ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա դրսևորվում է տարաբնույթ միջնորդավորված կապերի միջոցով, որոնք անտեսվում են միայն առաձգականությունների դիտարկման դեպքում:

Ալեքսանդրի մոդելի հիմքում ընկած է հիմնական մակրոտնտեսական նույնություն.

$$Y = C + I + G + X - M$$

որտեղ Y -ը ազգային եկամուտն է, C -ն՝ սպառողական ծախսերը, I -ն՝ ներքին ներդրումները, G -ն՝ պետական գնումները, իսկ X -ը և M -ը՝ համապատասխանաբար արտահանումը և ներմուծումը:

Հավասարումը կարելի է վերախմբավորել այնպես, որ առևտրային հաշվեկշիռը արտահայտվի մնացյալ փոփոխականներով՝

$$X - M = Y - (C + I + G)$$

Փակագծում նշված ծախսերի հանրագումարը ընդունված է անվանել կլանում և, սովորաբար, նշանակվում է A : Հետևաբար, եթե առևտրային հաշվեկշիռը նշանակենք TB , ապա ունենք՝

$$TB = Y - A$$

Այսպիսով՝ առևտրային հաշվեկշիռը ավելցուկային է, երբ եկամուտը գերազանցում է կլանումը և պակասորդային է, երբ կլանումն է գերազանցում եկամուտը: Այլ կերպ՝ առևտրային հաշվեկշիռը կարող է բարելավվել միայն այն դեպքում, երբ եկամտի աճը գերազանցի կլանման աճը, այսինքն՝

$$dT B = dY - dA$$

Հետևաբար՝ արժույթի արժեզրկման ազդեցությունը առևտրային հաշվեկշիռի վրա կախված է նրանից՝ արդյո՞ք եկամտի հավելվածը գերազանցում է կլանման հավելվածին, թե՞ ոչ:

Ընդ որում կլանման հավելվածը կարելի է բաժանել երկու բաղադրիչի: Մեկն արտահայտում է փոխարժեքի փոփոխման հետևանքով եկամտի աճի արդյունքում կլանման աճը, որի մեծությունը պայմանավորված է կլանման սահմանային հակվածությամբ՝ a : Իսկ մյուսն արտահայտում է փոխարժեքի փոփոխման ուղղակի ազդեցությունը կլանման վրա և ընդունված է անվանել «ուղղակի կլանում»՝ D :

$$dA = adY + dD$$

Վերջին երկու հավասարումների վերախմբավորմամբ կստանանք, որ

$$dT B = (1 - a)dY - dD$$

Հետևաբար՝ առևտրային հաշվեկշիռի վրա փոխարժեքի փոփոխման ազդեցությունը կախված է նրանից, թե (ա) a -ն մեծ, թե փոքր է մեկից, (բ) փոխարժեքի փոփոխման արդյունքում ազգային եկամուտը աճում, թե նվազում է, (գ) փոխարժեքի փոփոխման արդյունքում ուղղակի կլանումը աճում, թե նվազում է: Ընդ որում, որպեսզի առևտրային հաշվեկշիռը բարելավվի՝ $dTB > 0$, անհրաժեշտ է, որ $(1 - a)dY > dD$, այսինքն՝ ազգային եկամտի՝ սպառման նպատակով չօգտագործվող մասի հավելվածը գերազանցի ուղղակի կլանման հավելվածին:

Արդյո՞ք կլանման սահմանային հակվածությունը փոքր է մեկից: Քանի որ կլանման սահմանային հակվածության հիմնական բաղադրիչը սպառման սահմանային հակվածությունն է, ապա ընդունված է համարել, որ $a < 1$: Սակայն, ինչպես փաստարկում էր Ալեքսանդրը, երբ արժույթի արժեզրկման արդյունքում ներդրումները ընդլայնվում են, ապա կլանման սահմանային հակվածությունը կարող է մեկից մեծ լինել:

Նկատենք, երբ կլանման սահմանային հակվածությունը մեկից մեծ է, ապա եկամտի աճը կբերի առևտրային հաշվեկշռի ոչ թե բարելավման, այլ վատացման:

Դիտարկենք երկու տարբերակ. ոչ լրիվ զբաղվածության, երբ ազգային եկամուտը կարող է ընդլայնվել և լրիվ զբաղվածության, երբ ազգային եկամուտը չի կարող ընդլայնվել: Ընդ որում երկու տարբերակում էլ կոիտարկենք այն դեպքը, երբ արժույթը արժեզրկվում է:

Արժույթի արժեզրկման ազդեցությունը ազգային եկամտի վրա

Արժույթի արժեզրկման ազդեցությունը եկամտի վրա դրսևորվում է երկու հիմնական տարբերակով.

Զբաղվածության էֆեկտ: Երբ տեղի ունի Մարշալ-Լերներ պայմանը (արտահանման ու ներմուծման պահանջարկի առաձգականությունների գումարը մեկից մեծ է), ապա արժեզրկման հետևանքով *զուտ* արտահանումը աճում է, ինչը մուլտիպլիկացիոն էֆեկտով բերում է ազգային եկամտի ու զբաղվածության ընդլայնմանը: Սակայն, եթե Մարշալ-Լերներ պայմանը տեղի չունի, ապա զուտ արտահանումը նվազում է և, հետևաբար, կրճատվում է նաև ազգային եկամուտը: Փաստորեն, զբաղվածության էֆեկտը ունի երկակի դրսևորում և՛ դրական, և՛ բացասական:

Առևտրի պայմանների էֆեկտ: Արժույթի արժեզրկման դեպքում ներմուծումը թանկանում է, արտահանումը էժանանում, և, հետևաբար, առևտրի պայմանները վատանում են: Այսինքն՝ ավելի մեծ քանակի արտահանում է անհրաժեշտ միավոր ներմուծումը ձեռք բերելու համար: Հետևաբար՝ ազգային եկամտի վրա առևտրի պայմանների էֆեկտի ազդեցությունը բացասական է:

Այսպիսով, նույնիսկ եթե Մարշալ-Լերներ պայմանը տեղի ունի և զուտ արտահանումը արժույթի արժեզրկման հետևանքով աճում է, ապա առևտրի պայմանների էֆեկտը հանդես է գալիս իբրև հակակշռող գործոն: Ավելին, նույնիսկ եթե զբաղվածության դրական էֆեկտը գերազանցի առևտրի պայմանների բացասական էֆեկտին, ապա, այնուամենայնիվ, առևտրային հաշվեկշռի վրա արժեզրկման ազդեցությունը կախված է կլանման սահմանային հակվածության մեծությունից: Մասնավորապես, առևտրային հաշվեկշիռը կբարելավվի միայն, եթե $a < 1$:

Ինչպես նշվեց լրիվ զբաղվածության դեպքում ազգային եկամուտը չի կարող աճել և առևտրային հաշվեկշռի բարելավումը հնարավոր է միայն ի հաշիվ ուղղակի կլանման նվազման:

Արժույթի արժեզրկման ազդեցությունը ուղղակի կլանման վրա

Երբ արժույթի արժեզրկման հետևանքով ուղղակի կլանումը աճում է, ապա առևտրային հաշվեկշիռը վատանում է, իսկ երբ ուղղակի կլանումը նվազում է, ապա առևտրային հաշվեկշիռը բարելավվում է:

Իրական հաշվեկշռի էֆեկտ: Փողի նկատմամբ պահանջարկի պարզագույն մոդելի համաձայն փողի իրական պահանջարկը միշտ հաշվեկշռված է, այսինքն՝ գների աճի դեպքում փողի նկատմամբ պահանջարկը աճում է միևնույն չափով:

$$\frac{M}{P} = k$$

Որտեղ M -ը փողի զանգվածն է, P -ն՝ գների մակարդակը, իսկ k -ն հաստատուն է:

Գների մակարդակը հավասար է ներքին ու արտաքին արտադրության ապրանքների գների մակարդակների կշռված միջինին

$$P = \beta P^* + (1 - \beta)SP^{**}$$

Որտեղ β -ն ընդհանուր ծախսերում տեղական ապրանքների ձեռք բերման վրա կատարված ծախսերի կշիռն է, P^* -ը՝ ներքին արտադրության ապրանքների գների մակարդակը, P^{**} -ը՝ արտաքին արտադրության ապրանքների գների մակարդակը, S -ը՝ փոխարժեքը՝ արտահայտված օտարերկրյա արժույթի մեկ միավորի հաշվով ազգային արժույթի միավորներով:

Ինչպես հետևում է գների մակարդակի հավասարումից՝ արժեզրկման արդյունքում (S -ի աճի) P -ն աճում է: Եթե փողի զանգվածը մնա անփոփոխ, ապա P -ի աճի հետևանքով փողի իրական հաշվեկշիռը հաստատուն պահելու համար տնային տնտեսությունները հարկադրված կլինեն կրճատել կլանումը: Այսպես՝ գների աճին ի պատասխան տնային տնտեսությունները կփորձեն ընդլայնել տնօրինվող փողի քանակը՝ պարտատոմսերի վաճառքի միջոցով: Արդյունքում պարտատոմսերի գինը կնվազի, որի հետևանքով էլ տոկոսադրույքը կբարձրանա: Վերջինս կնվազեցնի ներդրումները և մասնավոր սպառումը ու, հետևաբար, կլանումը: Շեշտենք, որ իրական հաշվեկշռի էֆեկտի գործողության համար անհրաժեշտ է, որ կենտրոնական բանկը փողի առաջարկը չընդլայնի:

Եկամտի վերաբաշխման էֆեկտ: Արժեզրկման հետևանքով գների ընդհանուր մակարդակը աճում է, ինչը բերում է եկամուտների վերաբաշխման: Եվ եթե եկամուտները սպառման փոքր

սահմանային հակվածություն ունեցողներից վերաբաշխվում են սպառման բարձր սահմանային հակվածություն ունեցողներին, ապա ուղղակի կլանումը աճում է:

Այսպես՝ գների աճի արդյունքում ֆիքսված եկամուտ ունեցողների իրական եկամուտը նվազում է, իսկ փոփոխուն եկամուտ ունեցողների իրական եկամուտը՝ աճում: Մասնավորապես՝ աշխատավարձի աճի տեմպը, սովորաբար, փոքր է, քան գների աճի տեմպը և, հետևաբար, եկամուտը աշխատավարձ ստացողներից կվերաբաշխվի շահույթ ստացողներին: Իսկ քանի որ ֆիքսված եկամուտ ունեցողները, գերակշռաբար, հասարակության չունենոր խավն են, որոնց սպառման սահմանային հակվածությունը բարձր է՝ ի տարբերություն փոփոխուն եկամուտ ունեցող հարուստ խավի, ապա նման վերաբաշխման արդյունքում կլանումը կնվազի:

Արժեզրկման արդյունքում, սովորաբար, արտահանող ճյուղերում և ներմուծման հետ մրցող ճյուղերում եկամուտները աճում են, այնինչ իրական աշխատավարձը կրճատվում է՝ ի հետևանք գների ընդհանուր մակարդակի աճի: Այս դեպքում կլանման վրա ազդեցությունը անորոշ է, քանի որ, թեպետ կարելի է պնդել, որ ֆիրմաների ներդրման սահմանային հակվածությունը փոքր է աշխատողների սպառման սահմանային հակվածությունից, սակայն, ֆիրմաների՝ ապագայի նկատմամբ դրական սպասումների դեպքում, առավել ևս, եկամուտների աճի պայմաններում, ավելի հավանական է ուղղակի կլանման աճը:

Վերաբաշխումը հնարավոր է նաև հենց ֆիրմաների մեջ: Այն ֆիրմաները, որոնք օգտագործում են ներմուծվող հումք, արժեզրկման դեպքում կտուժեն, իսկ արտահանող ձեռնարկությունները, ընդհակառակը, կշահեն: Հետևաբար՝ արժեզրկման ազդեցությունը կախված է նրանից, թե ինչպես են տարբերվում տնտեսության տարբեր ճյուղերի կլանման սահմանային հակվածությունները:

Հանրագումարային, եկամտի վերաբաշխման ազդեցությունը կլանման վրա կարող է լինել ինչպես ընդլայնող, այնպես էլ սահմանափակող:

Սպասումների էֆեկտ: Ադապտիվ սպասումներով առաջնորդվող տնային տնտեսությունները հիմնվելով գների ընթացիկ մակարդակի բարձրացման վրա՝ ակնկալում են գների հետագա բարձրացում: Այդ դեպքում տնային տնտեսությունները հավանաբար կընդլայնեն ընթացիկ ուղղակի սպառումը, ինչը առևտրային հաշվեկշռի վրա բացասաբար կանդրադառնա:

Լորսեն–Մեթսլերի էֆեկտ: Արժեզրկման արդյունքում առևտրի պայմանների վատացման ազդեցությունը կլանման վրա դրսևորվում երկակի՝ եկամտի էֆեկտ և փոխարինման էֆեկտ: Եկամտի էֆեկտը դրսևորվում է նրանում, որ առևտրի պայմանների վատացումը նվազեցնում է ազգային եկամուտը՝ ինչպես նկարագրվեց վերը: Սակայն, տեղական արտադրության էժանացման արդյունքում արտասահմանյան արտադրության ապրանքների սպառումը փոխարինվում է տեղական արտադրության ապրանքների սպառմամբ: Եվ եթե փոխարինման

դրական էֆեկտի ազդեցությունը գերազանցում է եկամտի բացասական էֆեկտին, ապա արժեզրկման արդյունքում կլանումը կարող է աճել:

Այսպիսով՝ չնայած վերջնական արդյունքի անորոշությանը, կլանման մոտեցման հիմնական գաղափարը հստակ է. արժույթի արժեզրկումը կնվազեցնի ընթացիկ հաշվի պակասորդը միայն այն դեպքում, երբ ուղեկցվի եկամտի աճին նպաստող ու կլանումը զսպող տնտեսական քաղաքականությամբ: